

* * *

«Հանդես»-ի 1965 թ. № 4-ում (էջ 107—128) տպագրած իր «Զանգեզուրի արամեական արձանագրությունը» հոդվածում պատմարան Ա. Փերիխանյանը, խոսելով Արտաշես Առաջինի մասին, գրում է.

1. «Самого Арташеса Моисей Хоренский прямо называет «мидянином» (māg), причем неоднократно» (էջ 109):

2. Հստ Մովսես Խորենացու՝ Արտաշես Առաջինն ինքն է իրեն մար համարել, ասելով. «Я, мидянин, явился» (էջ 109):

3. Զանգեզուրի նորահայտ արամեական «արձանագրությունը հաստատում է նաև Արտաշեսյանների մարական աղերսին վերաբերող Խորենացու տվյալների հավաստի լինելը» (էջ 128):

Առաջին հայտարարության կապակցությամբ պիտի ասել, որ դա պարզապես թյուրիմացության արդյունք է: Պատմահոր ամբողջ երկում չկա ոչ մի այնպիսի նախադասություն, որի մեջ ինքը՝ Մովսես Խորենացին Արտաշես Առաջինին դիտեր որպես մար: Հստ նրա Արտաշես Առաջինը հայոց Սանատրուկ թագավորի որդին է, իսկ Սանատրուկն էլ՝ հայոց Աբգար թագավորի քրոջ որդին (տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, 1913, էջ 153—163): Այս է Մովսես Խորենացու կարծիքը. այլ կարծիք նա չունի: (Ավելորդ է ասել, որ մենք այս տողերը գրելիս չենք մոռանում Մովսես Խորենացու վկայություններում առկա որոշ շփոթությունները, որոնք վաղուց են նկատված Սանատրուկի, Աբգարի և այլոց կապակցությամբ):

Մովսես Խորենացու օգտագործած աղբյուրների համաձայն, Արտաշես Առաջինին հայ Արշակունի է ճանաչել նաև նրա դայակը՝ Սմբատ Բագրատունին, որը, դիմելով պարսից արքային, այսպես է ձևակերպել իր՝ Սմբատի խընդրանքը Արտաշեսի վերաբերյալ. «Ոչ այլ ինչ կամի Սմբատ, քան թէ զարին քո և զհարազատութիւն, զԱրտաշէս որդի Սանատրկոյ, զմերժեալն ի թագաւորութենէ իւրմէ, հաստատել յիւրում թագաւորութեանն» (նույն տեղում, էջ 168):

Մովսես Խորենացու Պատմության համաձայն, Արտաշես Առաջինի մասին այդ կարծիքն է ունեցել նաև պարսից արքունիքը, ուստի և բավարարել է Սմբատի խնդիրքը, նրան տրամադրելով «մասն ինչ ի զօրացն Ասորեստանի և զզօրս Ատրպատականի, զի տարեալ զԱրտաշէս հաստատեսցեն ի գահն հայրենի» (նույն տեղում, էջ 168):

Իսկ այստեղ նշված հայրենի զահն էլ, ինչպես գիտենք, հայոց թագավորական զահն է, որին այն ժամանակ իշխում էր Երվանդ վերջինը: Այդ Երվանդից էր, որ պիտի թագավորությունը զենքի ուժով վերցնէր Արտաշես Առաջինը: Եվ հենց այս Երվանդ արքան է, որ շարախոսել է Արտաշեսի հասցեին, նրան համարելով մերթ մար, մերթ հովվի որդի, որպեսզի այդ եղանակով, այսինքն, Արշակունիների արյանը մարական և հովվական արյուն հակադրելով, կարողանար զրգռել պարսից արքային և սպանել տար Արտաշեսին:

Այսպես, ուրեմն, բոտ Մովսեսը հորենացու Արտաշես Առաջինը հայոց Սանատրուկ թագավորի որդին է. այս կարծիքին են և՛ Սմբատը, և՛ պարսից արքունիքը, և՛ գործին մասնակից մյուս բոլոր անձինք, և՛ ինքը՝ Մովսեսը հորենացին: Այլ լուր է տարածել լոկ Երվանդ արքան՝ իր գահի մրցակցին՝ Արտաշեսին սպանել տալու միտումով:

Ուստի բոլորովին անհիմն է, այս ամենն անտեսելով, հայտարարել, թե ինքը՝ Մովսեսը հորենացին Արտաշես Առաջինին ուղղակի համարում է մար, այն էլ մի քանի անգամ:

Անցնենք Ա. Փերիխանյանի երկրորդ հայտարարությունը. տեսնենք, արդյո՞ք ինքը՝ Արտաշես Առաջինը իրեն մար է համարել և Երվանդ թագավորին ներկայանալով, հայտարարել. «Я, МНДЯНИН, ЯВИЛСЯ».

Պարզվում է, որ պատմահոր մոտ համապատասխան դարձվածքը բոլորովին այլ տեսք ու իմաստ ունի և գործ է ածված միանգամայն ուրիշ մտքով: Մովսեսը հորենացու համապատասխան պարբերության մեջ ասված է. Արտաշես Առաջինը, հասնելով «ի դաստակերտն Երուանդայ, և միարան գոչմամբ հրամայեաց աղաղակել զօրացն՝ «Մար ամատ», որ թարգմանի «Մարս եկն» (նույն տեղում, էջ 173):

Ինչպես տեսնում ենք, այստեղ պարզորոշ վկայված է, որ ոչ թե Արտաշեսն ինքն է ասել «Я, МНДЯНИН, ЯВИЛСЯ», այլ գործին է կարգադրել, որպեսզի նրանք «միարան գոչմամբ» աղաղակեն «Մար ամատ»: Գրանք բոլորովին տարբեր բաներ են:

Իսկ թե ինչու է Արտաշես Առաջինն այդպիսի կարգադրություն արել, դա էլ իր խորհուրդն է ունեցել, որի բացատրությունը տրված է հենց իր՝ Մովսեսը նարենացու կողմից: Գրանով Արտաշես Առաջինը կամեցել է հեզնել Երվանդ թագավորին, որը շարախոսել էր իր հասցեին՝ իրեն համարելով մար: Հենց այդ շարախոսության փոխարեն վրեժխնդիր լինելու նպատակով է նա ընդգծել «Մար ամատ»-ը՝ «չիշեցուցանելով զբշնամանս, ու յղէր Երուանդ առ թագաւորն Պարսից և առ Սմբատ, Մար գնա կոչելով» (նույն տեղում, ընդգծ. մերն են): Այսինքն, Արտաշեսը իրեն մար համարելը դիտել է որպես մեծ թշնամանք ու զրպարտություն: Այսպիսին է պատմահոր բնագիրը:

Գուցե Ա. Փերիխանյանն օգտվել է նրա ռուսերեն որևէ թարգմանությունից, ինչպես որ, բնականաբար, Վլադիմիր Գրիգորյանը իր ռուսերեն հոդվածին: Սակայն, Մովսեսը հորենացու թարգմանությունների մեջ էլ նման բան չկա: Այսպես, օրինակ, մեծանուն հայագետ Մկրտիչ Էմինի թարգմանության մեջ կարդում ենք.

«Арташес прибыл в виллу Еруанда и приказал войску кричать в один голос: «Мар амед», что означает: «Мар пришел», желая тем напомнить Еруанду оскорбление, с которым он обращался к парсийскому царю и Смбаду, называя Арташеса Маром» (История Армении Моисея Хоренского, М., 1893, էջ 95):

Ստավորապես նույնն ենք կարդում նաև մյուս թարգմանությունների մեջ: Հիշենք անվանի հայագետ Ստ. Մալխասյանցին, որի կատարած թարգմանության մեջ վերոհիշյալ պարբերության աշխարհարարն ունի հետևյալ տեսքը. Արտաշեսը «Երվանդի դաստակերտը հասնելով՝ գործին հրամայեց, որ միասին բարձր աղաղակեն «Մար ամատ», որ թարգմանվում է՝ մարս եկավ, սրանով հիշեցնելով այն վիրավորանքը, որ նրա մասին ուղարկում էր Երվանդ-

դր պարսից թագավորին և Սմբատին, նրան մար կոչելով» (տե՛ս Մալխասյանցի թարգմանությունը, 1962, էջ 202):

Այս բոլորը համոզում են, որ, իրոք, Ա. Փերիխանյանը, փոխելով պատմական փաստը, նրա մեջ դնում է նրա բուն բովանդակությանը միանգամայն հակառակ իմաստ, որով և աղավաղվում է ոչ միայն սկզբնաղբյուրը՝ Մովսես Խորենացին, այլև Արտաշես Առաջինի կենսագրությունը:

Ինչ վերաբերում է Ա. Փերիխանյանի վերջին հայտարարությանը, թե Զանգեզուրի «արձանագրությունը հաստատում է նաև Արտաշեսյանների մարական աղերսին վերաբերող Խորենացու տվյալների հավաստի լինելը», ապա պիտի ասել, որ նրա տված բացատրությունները նման հայտարարության հիմք չեն տալիս: Ըստ նրա, արձանագրության բովանդակությունը հետևյալն է. «Արտաշես թագավոր, Ծրվանդյան, Բարին՝ որդի Զարեհի» (էջ 128) կամ ավելի լրիվ «...деревня..., Арташес, царь, Ервандид, «Благой», сын Зареха, и Некфарр, венцезовлагатель, сын Ахшахсарта» (էջ 108):

Այստեղ ոչ մի հիշատակություն չկա այն մասին, թե Արտաշեսը մար էր: Էնդհակառակը, կա հիշատակություն, թե նա Երվանդունի էր:

Մի կողմ թողնելով հետազոտվող արձանագրության մարական երանդների փաստարկման հարցը, նշենք, որ բացարձակապես տարակուսելի է հեղինակի մտածողության եղանակը: Մի՞թե այն հեռավոր դարերում, հայոց արքայազնի սնունդից փորագրված արամեական արձանագրության լեզվի ինչ որ երանգով է որոշվելու այդ արքայազնի ազգային պատկանելությունը:

Ինչպես հայտնի է, հայ և օտար սկզբնաղբյուրների համաձայն, Արտաշես Առաջինը հայ է կամ հայ Արշակունի և հայոց թագավոր: Վրաց «Քարթլիս ցխովրեբա»-ի մեջ «Արտաբան» (իմա Արտաշես), «հայ», «Հայաստան» հասկացողությունները նույնիմաստ են (տե՛ս Զվանշեր, Պատմութիւն վրաց, Վենետիկ, 1884, էջ 31—34), իսկ հույն մատենագիր Պլուտարքոսի ուղղակի վկայությամբ նա կոչվում է «Արտաշես հայ» (Պլուտարքեայ... Զուգակշիռք, Գ, Վենետիկ, 1883, էջ 580), կամ «Արտաշես Արմեն» (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, 1944, էջ 121), ռուս թարգմ. «Артакс Армянский» (Плутарх, Сравнительные жизнеописания, II, Москва, 1963, Лукулл, XXXI): Զմտռանանք նաև, որ սերունդները երկու հազար տարուց ավելի պահել են նրա հիշատակը մատյաններում ու դիցաբանության մեջ, գրույցներում ու երգերում և երբեք չեն կասկածնլ այդ լուռումով: Այս է իրողությունը:

Անշուշտ, գիտությունը քարացած չէ, սակայն պատմության և ժողովրդի երկուհազարամյա ավանդներն ու տեղեկությունները խախտելիս պետք է ձեռքի տակ ունենալ լուրջ, ծանրակշիռ, հավաստի փաստեր և ոչ թե անհիմն հայտարարություններ:

Ա. Փերիխանյանը նույնքան քմահաճ եղանակով փորձում է մարական ծագում վերագրել նաև Բագրատունիներին: Ելման կետը նույնն է, Մովսես Խորենացին, որովհետև Արտաշես Առաջինի թագադիրը, պատմահոր տվյալներով, Սմբատ Բագրատունին է: Ուստի մեկին մար դարձնողը չի կարող զերծ մնալ հաջորդ զայթակողությունից: Սակայն այս հարցում բացարձակապես ոչ մի առիթ չկա Մովսես Խորենացու մոտ: Հին ողջ մատենագրությունը նույնպես ոչ մի առիթ չի տալիս: Ուստի պատրաստի կարծիքը վերագրվում է ականավոր պատմաբան Ն. Աղոնցին, որպեսզի նրա հեղինակությամբ դուռ բացվի դեպի

րնթերցողի վստահությունը: Ահա թե ինչ է դրում Ա. Փերիխանյանը. «Высказанное в свое время Н. Г. Адонцом предположение об атропатенско-мидийском происхождении рода Багратидов... получает свое подтверждение» (էջ 110): Ըստ այդմ էլ, նա րնթերցողին հղում է Ն. Աղոնցի «Армения в эпоху Юстиниана» մեծարժեք մենագրության 307—308 և 412—413-րդ էջերը: Դիմում ենք այդ աղբյուրին և համոզվում, որ Ն. Աղոնցը ոչ մի խոսք չի ասում այն մասին, թե Բագրատունիներն ունեն ատրպատական-մեդական ծագում: Նա միայն փորձել է որոշել Բագրատունյաց տոհմի սկզբնական բնակավայրի տեղը, նշելով, որ, հավանաբար, այն գտնվելիս է եղել Հայաստանի՝ իրանական կամ ատրպատականական սահմանամերձ գավառներում. «Багратидская династия возникла на иранской или атропатенской окраине Армении» (Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 307).

Ինչպես տեսնում ենք, Ն. Աղոնցը իր նշած գավառները ցույց է տվել ոչ թե իրանում կամ Ատրպատականում, այլ Հայաստանում: Նա նույնիսկ թվարկել է կոնկրետ վայրերի անուններ, որոնց կենտրոնը Բագրևանդն է. «Есть основание даже полагать, что Багратиды издревле жили в этих местностях и если признать связь между Bagrata и Bagrevanda, то Багреванд окажется первоначальной родовой областью Багратидов» (նույն տեղում, էջ 307):

Գալով հարցի էթնիկական կողմին, Ն. Աղոնցը, լոկ աշխարհագրական գործոնին վերաբերող իր այդ ենթադրությունից ելնելով, արել է մի ուրիշ ենթադրություն, կարծելով, «что династия (իմա Բագրատունիների) возникла на армяно-иранской этнической почве» (նույն տեղում, էջ 412): (Ինչպես տեսնում ենք, Ա. Փերիխանյանը Ն. Աղոնցի «հայ-իրանական»-ը դարձնում է «ատրպատո-մեդական»): Ավելին, Ն. Աղոնցը իր այդ մենագրությունից տասնամյակներ հետո, քննության հատուկ առարկա դարձնելով Բագրատունիների հարցը, դարձյալ խստառ չի մտածել նրանց և մարերի ազգակցական աղերսի մասին: Ընդհակառակը, նա կարծես ցանկացել է իր հաջորդներին միտք տալ խորհելու Բագրատունիների հայկական ծագման մասին: Այսպես, նա վկայակոչելով Անանունին («Սերեոս»), որի վկայությամբ Բագրատունիները սերել են հայազն Արամանյակից, տվել է այսպիսի բացատրություն. «Ասել է թե այս նշանավոր տոհմը օտարածին չէ, այլ բուն ազգային: Ափսոս, որ Անանուն չէ բացատրում թե ինչ հիմ ուներ իր տեսակետը» (Ն. Աղոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 112):

Հմուտ պատմաբանը, սակայն, դա անբավարար է համարել թեկուզ հարցադրման համար: Ամփոփելով իր հետազոտությունը Բագրատունիների ծագման մասին, նա այդ հարցն ի վերջո բաց է համարում, ավելացնելով հետևյալ տողերը. «Միակ ճշմարիտ տեղեկությունն է ինչ որ պահված է վարդանի մոտ, այսինքն որ վրաց Բագրատունիք ծագում են հայ Բագրատունիներից» (նույն տեղում, էջ 119):

Եզրակացությունը պարզ է. Ա. Փերիխանյանը, վկայակոչելով Ն. Աղոնցին, նրան է վերագրել իր կարծիքը՝ աղավաղելով նրա մտքերն ու պատմական իրողությունը: Ըստ որում, նա անտեսել է Ն. Աղոնցի հետագայի հատուկ մենագրությունը, սի բան, որ աններելի է:

Ամփոփելով մեր խոսքը, կարող ենք ասել, որ Ա. Փերիխանյանը, իսկ նրանից առաջ Գ. Տիրացյանը (տե՛ս «Բանբեր մատենադարանի», № 6, էջ 107—

128), առաջ բաշխելով հայոց Արտաշես Առաջին թագավորի և Բագրատունյաց տոհմի մարական աղերսին վերաբերող իրենց ստեղծած նոր կարծիքը, շին կարողանում փաստարկել այն: Դա լոկ անհիմն հնթաղրութիւնն է, որ արվում է Մովսես Խորենացու հաղորդած փաստերը և Աղոնցի կարծիքը վերափոխելու գնով:

Պատմ գիտուր. դոկտոր Ա. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

* * *

В шестом номере журнала «Народы Азии и Африки» за 1965 г. опубликована заметка проф. А. Н. Кононова «О тюркском языкознании в Турции». В ней проф. Кононов между прочим пишет: «Стамбульский университет — старейший университет в Турции, датой основания которого считается 1453 г., год завоевания Константинополя султаном Мехмедом II, является крупнейшим турецким университетом, в котором обучается около 30 тысяч студентов».

Как один из бывших студентов (1911—1916) гуманитарного факультета Стамбульского университета, я считаю своим долгом опровергнуть упомянутую выше необоснованную версию о дате основания Стамбульского университета.

Общезвестно, что Стамбульский университет был основан не в 1453 г., а в 1870 г. особым ферманом Султана Абдул-Азиза, т. е. более 400 лет спустя после завоевания Константинополя турками.

В своей четырехтомной «Истории Турции» турецкий историк Ахмед Расим приводит следующие сведения об основании Стамбульского университета: «В 1867 г., — пишет он, — французское правительство посылает Блистательной Порте ноту из 16 статей, в которой говорится о программе реформ в Турции. В начале этого документа говорится о необходимости привлечения в общую систему обучения также и христиан, об организации средних мусульманских школ, о необходимости основания университета с целью преподавания истории, права и других наук, а также и других высших учебных заведений для преподавания разных дисциплин» (احمد راسم، عثمانلى تاريخى، استانبول، ۱۳۲۹—۱۳۲۷ دور دنجى جلد، ص ۲۱۹)

Об основании упомянутого университета современный турецкий историк Э. З. Карал пишет: «Наконец, 8 февраля 1870 г. в присутствии садразама и государственных руководителей состоялось официальное открытие университета (Darülfünun), функции администрации университета султанским указом были переданы назначенному директору. Отделы преподавания были организованы в соответствии со статьями устава общего преподавания... Первоначально деятельность университета протекала в тяжелых условиях: не хватало преподавателей, уровень знаний студентов не позволял им следить за преподаванием. Не было учебников... В конце 1871 г. университет был закрыт... Только в 1874 г., при министре просвещения Джевдет-паше, занятия возобновились в здании